

- 96 Եւ նա զայս ինչ առնէր վասն այն,
 Զի խոստմնազանց գրտաւ բերան
 Անձին միում ատենական,
 Որում վայել չէր պատիր բան:
- 97 Զայս թուղթ Սարգիս տայր նաւաստւոյ,
 Բայց վաղ ընդ փոյթ զղջայր յետոյ,
 Եւ մինչ խնդրէր 'դարձ նոյն թըղթոյ,
 Լեալ էր վաղ իսկ նաւակն ուղւոյ:
- 98 Առեալ Յակոբ զայն թուղթ ցնծայր,
 Զի ի վաղուց հետէ մընայր
 Խօսման Սարգսի սրբամըտաբար
 Որով ըզնա ընկճել ցանկայր:
- 99 Թէպէտ սըրտիւ ընդ այն բախ էր,
 Իսկ արտուստ նա կեղծեալ տըխրէր,
 Ապա կընճռեալ յօնօք տանէր
 Զայն թուղթ ի տես իշխանաց մեր:
- 100 Յորոց ժողով նա բազմելով,
 Զայն գիր նոցուն ցուցանելով,
 Եւ դառնակուռ արտասուելով,
 Զայնէր է' ողբայր զայս ասելով:
- 101 Ո՛վ դուք իշխանք ազգանազեան
 Դատ արարէք ընդ իս է' ընդ այն,
 Յարգ եւ պատիւ իմ պետական
 Չերն է է' ազգի մեր ամենայն:
- 102 Ողբն, արտասուք Պատրիարգին
 Խաբէր զմանս որ գէտ չէին
 Թէ հեռ նորին էր մեծ եւ հին
 Ընդ սեպհական Սարգսի անձին: